

“**Highly recommended**”

## **“Cultivating Englishness by Translating”**

http://www.mechanics.kz

## Lyophilized Glutathione in L-Form

## ԱՐԴՅՈՒՆԱԳՈՐԾԻ ՎԵՐԱԿՐՈՆԻԿԱ

## The first created by "Paramecium b. bimini"

Barrett, John

וְהַזָּעִיר יְמִינֵךְ


and the problem that had previously arisen.

Introducing the new, improved *WolframAlpha*.





ՅԱՅ ԱՌԱՋԵԼԱԿԱՍՆ ՍՈՒՐԲ ԵԿԵՂԵՑՈՒ  
ԿՈՏԱԶՅԻ ԹԵՍ



ԾԱՂԿԱՁՈՐ - 2010

Ի ՀԱՅՐԱՊԵՏՈՒԹԵԱՆ  
Ն.Ս.Օ.Տ.Տ. ԳԱՐԵԳԻՆ ԵՐԿՐՈՐԴԻ  
ՄՐԲԱՎՆԱԳՈՅՆ ԵՒ ՎԵՐԱՓԱՌ  
ԿԱԹՈՐԻԿՈՍԻ ԱՄԵՆԱՅՈՆ ՀԱՅՈՑ

ԴՐԱՍՏԱՆԱՒ

Տ. ԱՌԱՋԵԼ ՄՐԲԱՎԱՆ ԵՊԻՍԿՈՊՈՒ  
ԹԱՐԱՎԵՎԱՆԻ  
ԱՌԱՋԵԼՈՐԴԻ ԿՈՏԱՅՅԻ ԹԵՍԻ

## ԱՌԱՋԱԲԱՆ

Հայ' զինվոր, Հայրենյաց Բողը՝ մեր հայրենիքը, սուրբ է մեր քաջարի համատակերի անաղարտ արյամբ: Մեր Երկիրը սուրբ դրախտավայր է՝ իր հնամենի վաճքերով ու ամրակառուց բերդերով, մաշտոցագիր մատյաններով՝ արարված հայ շինականի ամրակուր ձեռամբ: Քրիստոսի զորավոր խաչը թող առաջնորդող լուս լինի Զեր դժվարին, բայց պատվարժան, աստվածաբանու և հայրենապահապան Ըվիր-յալ գործում: Հայոց զինվորներ, թող այս աղոթագրուցիքը հաստատուն հավատք սերմանի ձեր կարոտարադ հոգիներում, ձեր աննկուն ոգին թող միշտ արթուն մնա և թող ձեր քրիստոնեական հավատքը դառնա վահան՝ ընդդեմ բոլոր փորձությունների: Հայ' զինվորներ, անմնացորդ Ըվիրվածությամբ ծառայեք արիաբար՝ Հայաստան աշխարհի հզորացման և Սուրբ Եկեղեցու պայծառացման համար. ամեն:

Օրհնությամբ՝



ԿՈՏԱՅՔԻ ԹԵՍԻ ԱՌԱՋԱԲԱՆ  
ԱՌԱՋԱԲԵԼ ԵՊՍ. ՔԱՐԱՄՅԱՆԻ

## **Գրքույկը նվիրվում է Հայոց բանակի ստեղծման 18-ամյակին**

Գրքույկում գետեղված են հայրենասիրոթյան  
մասին նշանավոր մարդկանց խոսքեր, աղոթքի  
մասին Եկեղեցու սուրբ հայրերի խրատներ և  
ամենօրյա աղոթքներ

Սիրելի՝ զինվոր, այս գրքույկը թող դառնա  
րո ուղեկիցը գիտակցական ողջ կյանքի ըն-  
թացքում: Երբ մենության մեջ լինես, այն կը սկե-  
րակցի քեզ, երբ քաղես, այն սնունդ նկինի, երբ  
ծարավես, այն կմագեցնի ծարավդ, երբ մոլոր-  
վես, քեզ համար այն փարոս կդառնա՝ առաջ-  
նորդելու համար այն միակ ճշմարիտ ճանա-  
պարհով, որը մեզ ցույց է տվել մեր Տեր Հիսուս  
Քրիստոսը:

**Ժիրայր քահանա Խաչատրյան**

\* \* \*

Վրթանես հայրապետու սկսեց քացատրել, որ Օրանք, ովքեր այդ պատերազմում ընկան հայրենիքի, Եկեղեցու և աստվածադիր օրենքների համար, որպեսզի Եկեղեցիները և սրբություններն անհավատների ձեռքը չընկնեն, սուրբ հավատքը շանարգվի, դարձան ոչ միայն քարեպաշտ Օահատակներ, այլև Քրիստոսի ճշմարիտ վկաներ. Ուստի Օրանց հիշատակը պետք է տոնվի որպես Քրիստոսի Օահատակների տոն: Վրթանես մեծ քահանայապետն այդ քացատրությամբ ոչ միայն օրենք կարգեց, որ ամեն տարի տոնվի Օրանց հիշատակը, այլև հրամայեց, որ ովքեր Օրանց օման Օահատակվեն, Օրանց հետ անխափան հիշատակվեն.

Բյոգ. ԻՒ

### Իմաստուն զինվորը (առակ)

Մի իմաստուն զինվոր պատերազմ էր գնում, որը երկու ոտքով կաղ էր

Եվ զինվորներից մեկը Օրան ասաց. «Ո՞վ ողորմելի, ո՞ւր ես գնում, քեզ իսկույն կսպանեն, որովհետև փախչել չես կարող» Եւ նա պատասխանեց. «Ո վ անմիտ, ես գնում եմ պատերազմ

ոչ թե փախչելու, այլ կանգնելու, կովելու և հաղթելու համար »:

### Վարդաճ Այգենկցի

\* \* \*

Հայը իր կյանքը պահպանելու մեկ միջոց մը ունի միայն՝ զենք ու զինավարժություն: Ես չե, որ կը նրավիրեմ ձեզ, այլ դժբախտ հայրենիքի հողն ու քարը իրենց արյունով Շերկած մեր համատակներն են, որ կոչ կանեն ձեզ զենքի, զինավարժության և վրեժինդրության:

### Զորավար Անդրանիկ

\* \* \*

Հայրենիքում է քո և՛ Շերկան և՛ ապագան, օտար երկրում՝ միմիայն Շերկան:

### Հիռշֆելդ

\* \* \*

Երշանկությունը միշտ քաջի կողմն է:

### Բագրատիոն

\* \* \*

Դավաճաններին արհամարժում են նույնիսկ նրանք, ում ծառայություն են մատուցել:

### Տատիանոս

\* \* \*

Բարիք ես կորցնում քիչ բան ես կորցնում,  
պատիվ ես կորցնում շատ բան ես կորցնում,  
խիզախությունը ես կորցնում կորցնում ես ամեն  
ինչ:

*Գյորե*

\* \* \*

Առաքինության ամենամեծ սխրանքները  
կատարվել են Բայրենիցի Շկատմամբ ունեցած  
սիրուց:

*Ժան Ժակ Ռուստ*

\* \* \*

Օսար Երկիրը Բայրենիք չի դառնա

*Գյորե*

\* \* \*

Ով չի սիրում իր Երկիրը, ոչինչ սիրել չի  
կարող.

*Զ Բայրոն*

\* \* \*

Հայրենասիրությունը՝ մարդկային բարոյա-  
կան Բատկություններն իր մեջ միացնող այդ գե-  
րագույն առաքինությունն է ազգերի գոյության

անհրաժեշտ պայմանը, նրանց ուժի և մեծության անսպառ աղբյուրը:

Այդ նվիրական զգացումը զարգանում է աստիճանաբար: Այն զարգանում է ժողովրդի ինքնազիտակցության և արժանապատվության զգացումի հետ և կործանվում՝ նրա բարքերի ապականության, նյութականացման հետ:

Հայրենիքն ապրում է հայրենասիրությամբ և կործանվում դրա պակասից:

Ժողովուրդն առանց հայրենասիրության նույնն է, ինչ մարմինն առանց Բոգու: Այն մայրն է մի շարք առաքինությունների՝ գաղափարականության, անձնվիրության, արիության:

Այն պատերազմողի բարոյական ամրությունն է, կախարդական զրաբը, անվրեպ գենքը. Հայրենասիրությամբ հարուստ ժողովուրդը դեպքերի խաղալիքը չէ, այլ նրամայողը: Այդպիսին «նավարեկությունների» ժամանակ բարոյապես չի գինաթափվում, այլ վստահ իր ուժերին՝ ուղղում է իր մեջը, վերագրավում իր նախկին դիրքերը, որությունը:

Փոքր ազգերը պարտավոր են ավելի հայրենասեր լինել, քան մեծերը:

**Թշնամիները նման են շների. որքան վախեցար, այնքան կհարձակվեն**

**Հավատ ներշնչել ժողովրդին, բանակին՝ կնշանակի տասնապատկել նրա ուժերը**

Ապրել ու գործել միայն այն բանի համար, որի համար արժե մեռնել, և մեռնել միայն այն բանի համար, որի համար արժե ապրել:

Խսկական առաջնորդը շատ անգամ չի հշմարվում. նա երևան է գալիս, երբ զգացվում է նրա կարիքը, նա հայտնվում է վտանգի ժամանակ:

Կոիվն արվեստ է, այլ ոչ արհեստ. այստեղ ոչ մի զմուսված կանոն և ոչ մի մեռյալ շարլոն լինել չի կարող. վճռականություն և ստեղծագործություն՝ ահա նրա վարած կոիվը

**Գարեգին Նժդեհ**



## ԱՂՈԹՔԻ ՄԱՍԻՆ

Աղոթքն ամրության պարիսապ է, հաստատության սյուն, հավատքի հիմք, հուսո խարիսխ. առ Աստված ելնելու սանդուղք Աղոթքը պարձանների պատճեն է, փրկության պատճառ, բարիքների առիթ, համբերության մարզիչ, աստուածաշտության ծանոթություն, Առորք Հոգուն հրավիրող, ինչպես վկայում է աղոթքով այս ամենը գտած և պայծառացած Կոռնելիոսը [Գործ Ժ 1-33]: Աղոթքը սանդարամետական դեմքի հալածիչ է, Բելիարին [Դատ. Խ 13] ջախչախող, բանսարկուին կործանող, Օռա բոլոր արկածները խափանող և կորսույան ամոթ Եւ քանի որ սատանան գիտի, որ մարդն աղոթելիս շնորհ է ստանում Աստծուց, ուստի ջանում է աղոթքի ժամին ցնորել մարդկանց մտքերը, որպեսզի զրկի այն շնորհներից, որոնք նրանք ստանում են մաքուր մտքով աղոթելիս:

Ուստի մենք, իմանալով այս, նրան հակառակ հանապազ ջանանք անզբաղ մնալ աղոթքում: Եւ այն ժամին մեր սրտերը մաքրենք չարի բոլոր արկածներից և միշտ աղոթենք առանց բարկության և երկմտության: Եւ մանավանդ սրտանց աղոթենք թշմամիների համար, որպեսզի մեր աղաշանքն էլ ընդունելի լինի Աստուծո մոտ: Եւ հատկապես աղոթքի ժամին մեր հոգիներում ընդունենք Քրիստոսի սիրո հուրը՝ հարատև պաղատանքներով արթուն լինելով՝ Նրա առջև, առօրյա հոգսերը թեթև համարելով՝ հանուն մշտնշնավոր բարիքների վայելքի:

Պարտավոր ենք միմյանց համար աղոթել, օգնել և փրկել միմյանց մարմնի և հոգու վտանգներից: Քանի որ եթե մարտընկերներն զգուշանում են ոչ միայն [սեփական] անձի, այլև ընկերոջ համար և մեռնում նաև ուրիշների համար, ո՞րչափ առավել ևս մենք ենք պարտավոր հոգնոր պատերազմում աղոթքներով և բազում բարեխոսություններով միմյանց օգնական լինել, ինչպես սովորեցինք գլխավոր առաջալներ Պողոսից, Հովհաննեսից և Հակոբոս Տեառնեղրայրից:

Քանզի ասում է. «Միմյանց համար աղոթեցե՛ք, որպեսզի բժշկվեք. քանզի արդարի ա-

դոթքը խիստ գորավոր է օգնելու համար» [Հակ. Ե 16], իսկ Պողոսն ասում է. «Զգույշ լինենք միմյանց համար սիրո և քարի գործերի հորդորներով» [Երք. Ժ 24]: Եւ դարձեալ թե՝ «Ամենայն աղոթքներով և աղաչաճքներով ամեն ժամ աղոթեցե՛ք հոգով և նույնի մեջ տքնեցե՛ք ամենայն ժուժկալությամբ և աղաչաճքներով բոլոր սրբերի համար» [Եփես. Զ 18]: Այսինքն՝ նաև բոլոր քրիստոնյաների, և ավելացրեց թե՝ նաև ի՞նձ համար:

Եվ եթէ Պողոսն աշակերտների աղոթքների կարիքն ուներ, որշա՛փ առավել ևս մենք կարիք ունենք միմյանց համար աղոթելու. և մենք, ուրիշների համար աղոթելով, ուրիշների աղոթքները կշամենք մեզ համար: Իսկ Հովհաննեսը ոչ միայն աղոթքների պարտավորեցրեց մեզ, այլև մահուան: «Հիսուս,- ասում է,- իր կյանքը դրեց մեզ համար, մենք եկ պարտավոր ենք մեր եղբայրների համար դնել մեր կյանքը» [Ա. Հովհ. Գ. 16]: Եւ եթէ պետք է, որ մենք մեռնենք ամենքի համար, ինչպէս ասում է [առաջյալը], ապա առավել ևս [պէտք է] աղոթենք ամենքի համար:

Քանզի Նա, Ով աղոթքների վարդապետն է և ընդունիչը, հրամայում է աղոթել ամենքի Հորը ո՞չ հատուկ անձի համար, այլ բոլորի՝

«Հայր մեր» ասելով, քանզի Սուրբ Ավագանով որդիացանք Նրան Եւ այսպէս կարգով հայցում է բոլոր եղբայրների համար՝ «մեր և մեզ» և ո՛չ երթեք՝ «իմ և ինձ» ասելով, և մենք ճշմարիտ խաղաղություն խնդրենք:

### Խորրով Ասձեւացի

\* \* \*

Միտքը կույր է, եթե չի խոկում Աստծունը, Բամը է, եթե չի աղոթում, խով, եթե Աստծո պատվիրանները չի լսում, մեռած է, եթե Աստծուն չի սիրում, Աստծուն թշնամի է, եթե սիրում է այն, ինչ ատում է Աստված. Ամբարջտություն է խնդրել Աստծուց այն, ինչ Աստված չի կամենում:

ԷԱ. Սուրբ Բայրերն աղոթքը նմանեցնում են երկնքից երկիր կախված ուկե շղթայի, որն աղոթասերները, ջանալով ձեռքով դեպի իրենց քաշել, հոգով երկինք են ելում:

Աղոթքն անպարտելի գենք է դևերի դեմ պատերազմներում, և քանի որ դևերը գիտեն, որ աղոթքով պարտվում են մարդկանցից, այդ պատճառով առավել ջանում են խափանել մարդկանց աղոթքը, քան այլ բարեգործությունները: Ուստի ձանձրույթ, նեղություն ու ծանրութ-

յուն են պատճառում սրտին և տեսակ-տեսակ շար մտածումներ միտքը գցում, որպեսզի աղոթքը խափանեն կամ անպտուղ դարձնեն. Հետևաբար, ով աղոթելիս ձանձրուց ու ինչ-որ նեղություն է զգում, թող իմանա, որ դա դեերի որոգայթ է և երբեք շրովամա աղոթելիս, այլ շաճքերում առավել զորանա՝ Տիրոջից օգնություն հայցելով: Եւ Աստված, որ մոտ է Օրանց, ովքեր փշրկած սրտով փնտրում են իրեն, իսկովն օգնության է հասնում, և դեերն անմիջապես հայածվում ու շքանում են:

Չատ անգամ Աստված, մեր խնդրանքը շկատարելով, առավել է ողորմում, քան կատարելով: Քանզի երբ անգիտությամբ որևէ վնասակար բան ենք խնդրում՝ կարծելով, թե լավ բան է, Աստված շտալով՝ մեծ ողորմություն է մեզ անում: Ուստի վայել չե տրտմել ու Աստծոց տրտնչալ, թե մեր խնդրանքը շկատարեց, այլ պետք է ուրախ սրտով ապավի՛նենք Աստծո կամքին, որ անի այնպես, ինչպես կամենում է. Քանզի միշտ մեր օգոտն է կամենում ու իր բարերարությամբ այն տալիս:

Աստված երբեմն ուշացնում է տալ մարդկանց խնդրածը, որպեսզի պարզեների հարգը լավ իմանան և ինչ որ առնում են, չկորցնեն,

քանզի մարդիկ սովոր են անաշխատ ստացած  
բարիքներն անհոգությամբ կորցնել: Երբեմն ել  
ուշացնում է, որպեսզի խնդրողներին առավել  
արիացնի աղոթքի ջանքերի մեջ և գերազույն  
պարզների արժանացնի: Իսկ երբեմն արագո-  
րեն շնորհում է, որպեսզի անհամբերության  
պատճառով վհատվելով՝ շնուսալը վեն:

### *Պողոս Աղրիանապոլսեցի*

\* \* \*

Հաճախ աղոթեցեք, քանզի աղոթքներն  
են, որ մարդկանց բարձրացնում են առ Աստված  
և Աստծուն խոնարհեցնում դեպի մարդիկ:

### *Ս Ներսես Շնորհալի*

\* \* \*

Աղոթքն առավել հարազատ և մերձավոր է  
Աստծուն, քան ամեն մի առաջինություն, քանզի  
բոլոր մյուսները որպես հանդերձանք և պատ-  
րաստություն են Աստծո մոտ մուտք գործելու  
համար, իսկ սա դեմ հանդիման խոսակցություն  
է Աստծո հետ: Քանզի ինչպես որ երերազործի  
ողջ աշխատությունը պտուղները հավաքելու  
համար է, իսկ խոհարարինը՝ կերակրելու, այն-  
պես էլ ամեն մի բարեգործություն, զգաստութ-  
յուն և պարկեշտություն մտքի ճանապարհը

հարթելու համար է. [որպեսզի] անզրադապես Աստծո հետ, ինչպես սիրելի բարեկամի, աղոթքով զրուցի և անձի ու աշխարհի բոլոր մարմնավոր և հոգևոր կարիքները (Նրա) առաջ դնի, Նրանից հայցի բոլոր բարիքների հաջողութ և փրկություն թշնամու որոգայթից

Եվ այս առաքինությունը մյուսների պես սահմանափակ չէ, այլ (կարող ենք) անսահմանաբար գործել ամեն ժամ՝ ըստ տերունական հրամանի, որ ասում է «Արթո՛ւն կացեք եւ ամենայն ժամ աղօթեցե՛ք» (տե՛ս Մատթ. ԻՉ 41 և Ղուկ. ԺԸ 1): Ինչպես որ ինքը՝ բոլոր աղաշանքներն Ընդունողը, որպես մեզ օրինակ և հորդոր, բազում անգամ ողջ գիշեր աղոթում էր Աստծոն: Եվ առաքյալը, Նրանից ուսանելով, ասում էր. «Ամեն ինչի համար գոհացե՛ք, անդադար աղօթեցե՛ք» (տե՛ս Ա Թեսաղ. Ե 18). Քանզի այսպես է պատշաճ. նախ տրված բարիքների համար գոհանալ և ապա առաջիկայի համար խնդրել Եվ ոչ միայն անձի և տան, որդու և ընտանիքի համար անել այս, այս ամբողջ աշխարհի, (որպեսզի) Նա տնօրինի յուրաքանչյուրի հոգու և մարմնի կարիքները և օգուտները: Առավել ևս [պետք է աղօթել] թշնամիների և ատելիների համար՝ ըստ Տիրոջ խոսքի թե՝

«Օրինեցէք ձեզ անհօղներին եւ աղօթեցէք Օրանց համար, ովքեր ձեզ լլկում և հալածում են» (տե՛ս Մատթ. Ե 44) Քանզի աղոթքը հալածում է ամեն տեսակ ատելություն և ոխակալություն, որովհետև ինչպես կարող է ոխակալությամբ լինել Օրանց հանդեպ, որոնց համար ճշմարիտ և աներկրա սիրով աղոթք է անում և փրկություն հայցում Տիրոջից:

Պետք է ամբողջ սրտով ներել պարտապահներին և սիրով աղոթել Օրանց համար, այսպես մեզ Աստված իշխանություն տվեց մեր մեղքերի թողության համար, քանզի ինչ սրտով թողնում ենք Օրանց պարտքերը և սեր ու գուր ցուցաբերում Օրանց հանդեպ, նույն շափով էլ Աստված մեր հանցանքներն է թողնում և իր արարշական սերն ու գթությունը սփռում մեզ վրա

### Մ Գրիգոր Նարեկացի

\* \* \*

Բոլոր աստվածաբանները, որ եկել են կամ գալու են, եթե ի մի գալով կամենան խոսել աղոթքների մասին, չեն կարողանա բավականապես ճառել Օրա զորությունից: Քանի որ աստվածաշնչյան բոլոր գրքերում՝ թե՛ Բին և թե՛ Շոր, որքան հրաշք ու մեծագործություն եղել է,

տեսնում ենք, որ աղոթքների շնորհիվ է կատարվել:

Պահցի համար կարող ես պատճառաբանել թե՝ տկար եմ և այլն, ողորմության համար ասել թե՝ աղքատ եմ, ի՞նչ տամ, ճգնությունների, Բալածանքների, չարչարանքների, Բավատքի (գործերի) և այլ այսպիսի խստագույն առաքինական գործերի համար կարող ես պատճառաբանել թե՝ դժվար են, չեմ կարող տանել։ Իսկ աղոթքի համար առարկելու պատճառ բնավ չունես, քանզի ո՞ր Բասակում, ո՞ր կացությունում, ո՞ր ժամանակում և ո՞ր տեղում ել մեկը լինի՝ թե՝ ծեր, թե՝ տղա, թե՝ Բարուստ, թե՝ աղքատ, թե՝ առողջ, թե՝ հիվանդ, կարող է աղոթել, եթե կամենա:

Ուրեմն տե՛ս՝ որքա՛ն ճախատելի է աղոթքի մեջ ծովլ մարդը, որ ամեն ինչի կարուտ լինելով և պես-պես երևացող և աներևույթ փորձություններով շրջապատված, չի դիմում այնպիսի (բարիքների) Տվողին, ով Ինքն է հորդորում. «Խնդրեցե՛ք Եւ կատանաք» (Մատթ. Է 7) և «Եկե՛ք Ինձ մոտ, բոլոր յոգնածներդ ու բեռնաւորուածներդ, Եւ Ես ձեզ կհանգստացնեմ» (Մատթ. ԺԱ 28):

Հատ սուրբ Վարդապետների՝ ինչպես որ երկիրը երկնքի կարիքն է զգում, որ ընդունի Ծրանից ցող, անձրև, ջերմություն և այլն, որովհետև առանց դրանց գոյատևել չի կարող, այնպես էլ մարդը կարոտ է աստվածային պես-պես շնորհների և օգ-նությունների, առանց որոնց ասես մեռած է հոգով, թեպետ և մարմնով կենդանի լինի: Ուրեմն՝ ինչպես որ դիմում են աղքատները հարուստներին, հիվանդները՝ բժիշկներին, թույլերը՝ ուժով կարողներին և ծարավներն՝ աղբյուրներին, այնպես էլ մարդը, ամեն ինչի կարոտ լինելով, ըստ հոգու և մարմնի անգոր, պարտավոր է միշտ դիմել Աստծուն ու մնալ աղոթքի մեջ և Նրանից օգնություն խնդրել...


*Միմնաներ*



# ԱՄԵՆՈՐՅԱ ՎՂՈԹՁՆԵՐ

## ՏԵՐՈՒՆԱԿԱՆ ԱՂՈԹՔ

Հայր մեր, որ յերկին ես, սուրբ  
եղիցի անուն Քո, եկեսցէ արքա-  
յութիւն Քո, եղիցին կամք, Քո, որ-  
պես յերկինս եւ յերկրի: Զհաց մեր  
հանապազորդ տո՛ր մեզ այսօր եւ  
թո՞ղ մեզ զպարտիս մեր, որպես եւ  
մեր թողումք մերոց պարտապա-  
նաց: Եւ մի՛ տանիր զմեզ ի փոր-  
ձութիւն, այլ փրկեա՛ զմեզ ի շարէն,  
զի Քոյ է արքայութիւն եւ զօրութիւն  
եւ փառք յաւիտեանս. ամէն:



## Առավոտյան ժամի աղոթքներ

Գոհանում ենք Քեզանից. Տե՛ր Աստուած մեր, որ Երևելի լուսով Քո բերկրանքով լցրիր բոլոր արարածներիդ. իսկ պատվիրաններիդ իմանալի լուսով լուսավորեցիր Քո բոլոր հավատացյալներին Զորացրու և մեզ. Տե՛ր, որպեսզի պահպանենք այս առավոտ և ամենայն ժամանակ Քո պատուիրանները, որպեսզի մտքով լուսավորյալ՝ միշտ Քեզ հանելի գործենք, և բարությամբ հանդերձավորված՝ հասնենք մեր Տիրոջ և Փրկչի՝ Հիսուս Քրիստոսի բոլոր սրբերին, որին վայել է փառք. իշխանությունն և պատիվ այժմ և միշտ և հավիտյան հավիտենից. ամեն

Տե՛ր, եթե շուրթերս բանաս, իմ բերանը կերպի Քո օրհնությունը:

Աստուած, Աստուած իմ, ես կանուխ եմ քեզ դիմում. Քեզ է ծարավի իմ հոգին, որքան առավել նաև մարմինն իմ, ամայի և անցրդի երկրի նման, որտեղ ճանապարհ չկա:

Ինչպես եղչերուն է փափագում շրերի աղբյուրները, այնպէս իմ հոգին փափագում է Քեզ Աստուած իմ Շարավի է իմ հոգին Քեզ. Աստուած նզոր և կենդանի, ե՞րբ եմ գալու հանդի ման Աստծուն.

Քո լուսավորվեցինք բոլորս, Քրիստոն, և Քո սուրբ Խաչին ապավինեցինք հավատացյալներս, Փրկի՛չ:

Հսի՛ր մեզ, Աստու՛ծ Փրկիչ մեր, տո՛ւր մեզ Քո խաղաղությունը և ողորմի՛ր մեզ, մարդասե՛ր Տեր:

Ամենակա՛լ, ամենամե՛ծ Աստված, ընդունի՛ր առավոտյան այս աղոթքները և բանավոր պաշտամունքը Քո անապական և երկնային խորանների մեջ՝ Մագեցրո՛ւ մեզ վրա Քո արդարության և իմաստության լուսը, դարձրո՛ւ մեզ լուսի և ցերեկվա որդիներ, որպեսզի այսօր երկուղածությամբ վարենք մեր կյանքը և առանց գայթակղության ավարտենք Քանզի Դու ես մեր օգնականը և Փրկիչը և Քեզ վայել է փա՛ռք, իշխանություն և պատի՛վ այժմ և միշտ և հավիտյան հավիտենից. ամեն

### Աղոթք, երբ որևէ գործ ես ձեռնարկում

Մեր ձեռքերի գործերն ուղղի ր, Տե՛ր և մեր ձեռքերի գործերը հաջողի՛ր

Փա՛ռք Հորը և Որդուն և Սուրբ Հոգուն այժմ և միշտ և հավիտյան հավիտենից. ամեն-

## Երանելի Ցովիան Գառնեցու աղոթքը ճանապարհի Բամար

Առաջնո՞րդ կյանքի, ճանապարհի ճշմարտության, Տե՛ր մեր Հիսուս Քրիստոս, որ առաջնորդեցիր Հովսեփին Եգիպտոս, իսրայելացիներին՝ Կարմիր ծովի միջով, Մովսեսին՝ դեպի Սիւա լեռը, [Խորայէլի] ժողովրդին՝ Ավետյաց երկիր և Կղեղվազանց ուղեկցեցիր Էմմավոս, աղաչում եմ Քեզ, Տե՛ր, առաջնորդի՛ր նաև ինձ և իմ եղբայրներին խաղաղությամբ գնալու առաջիկա ընթացքը, փրկի՛ր երևելի և աներևոյթ թշնամուց և բարի առաջնորդի՛ր նպա տակավայրը Բասնելու Բամար: Քանզի Դու՛ ես մեր ճանապարհը և ճշմարտությունը և կյանքը, և Քեզ փա՛ռք և երկրպագություն այժմ և միշտ և Բավիտյան Բավիտենից, ամեն:

### Հիվանդության ժամանակ

Տե՛ր Աստուած մեր, փարատի՛ր քո ժողովրդի ցավերը և բժշկի՛ր նիվանդությունները և բոլորին կատարյալ առողջություն շնորհի՛ր ամենահաղթ Խաչիդ նշանով, որով վերացրեցիր մարդկային ցեղի նեղությունները և դատապարտեցիր մեր կյանքի ու փրկության թշնամուն: Դու

Ես մեր կյանքն ու փրկությունը, բարերար և բազումողո՞րմ Աստուած, միայն Դու կարող ես քողություն տալ մեր մեղքերին և հեռացնել մեզնից ախտերն ու հիվանդությունները։ Բարիքներ՝ պարզեցող, Քո առաւ ողորմությունը պարզեցի՛ր արարածներին՝ յուրաքանչյուրին ըստ պատշաճի, որոնցից շարունակ փառաբանվում է ամենսուրը Երրորդությունդ այժմ և միշտ և հավիտյանս հավիտենից, ամեն։

## Սուրբ Գրիգոր Լուսավորչի ասած աղոթքը, Երբ մեկը փորձության մեջ է ընկնում

Օրինյալ է Քո մարդասիրությունը,Տե՛ր իմ  
և Փրկիչ իմ Հիսուս Քրիստոս Ինչո՞ւ ես լրում  
իմ՝ Դու' ես միայն առանց մեղքի, և Քո անոնց  
անոխակալություն և մարդասիրություն է ցուց  
տալիս Գթա՛ իմ՝ քանզի Դու' ես միայն մար-  
դասեր Փրկի՛ր իմ՝ մեղքերի մեջ ընկածիս,  
քանզի Դու' ես միայն առանց մեղքի Հանի՛ր իմ՝  
իմ անօրենությունների տիղմից, քանզի ընկղմ-  
վեցի հավիտյանս հավիտենից Փրկի՛ր իմ՝ իմ  
թշնամիներից, քանզի ամա առյուծի պես գոշում  
և մոնշում եմ՝ կամենալով կլանել իմ՝ Արդ, Տե՛ր  
իմ, արձակի՛ր Քո շանթերը և կործանի՛ր նրանց  
զորությունները, թող երկնչեն ու խավարեն Քո

Երեսից, քանզի անկար են ու չունեն զորություն՝ Քո և Քեզ սիրողների առջև կանգնելու։ Տեսնում են Քո Խաչի նշանի զորությունը, Տե՛ր, և զարհուրում և ամաչելով հեռու փախչում նրանցից, ովքեր աղոթում են Քեզ։ Այժմ, Տե՛ր, պահպանի՛ր և փրկի՛ր ինձ, քանզի Քեզ ապավիճեցի, Շեղությունից ազատի՛ր իմ անձը, որպեսզի իսպան կորսոյան շմատնի ինձ Շենքավորը, որ ծածուկ հնարեցրով մարտնչում է իմ դեմ։ Որ խորհուրդների Տեր ես և քննում ես սրտերն ու երիկամները, սրբի՛ր սիրու և խորհուրդներս զագիր ու պիղծ խորհուրդներից, որպեսզի իսպան չկորչեմ հավիտենական կորսով։

Ո՞վ ամենակարող Աստված իմ, ողորմի ր ինձ, մեղավոր Բոգուս արտապելու շնո՞րհ տուր, որպեսզի լվանամ մեղքերիս բազմությունը, որպեսզի փրկվեմ ամբարիշտներին գերենի Բուր Շետող ամողորմ Բրեշտակների ձեռքերից Երանի՛ թե լայի հանապազ՝ աղաչելով Քեզ, Աստված, որպեսզի անարժան շիամարես այնժամ, երբ գաս, և չլսեմ այն ահավոր ձայնը, թե՝ «Հեռո՛ գնա, անիրա՞վ մշակ, չգիտեմ որտեղից ես»։

Շարձրյա՛լ Աստված, (Դու ես) միայն առանց մեղքի, շնորհի՛ր ինձ՝ մեղավորիս Քո բազում գթության այն օրը, որպեսզի հայտնի չդատ-

Ըստ իմ ծածուկ ամբարշտությունները ամենատես հրեշտակների և հրեշտակապետների, մարգարեների, առարյալների և սուրբ արդարների առաջ: Այլ փրկի՞ր ինձ՝ ամբարիշտիս, քո ողորմության շնորհներով Կատարյալ արդարների հետ ընդունի՞ր ինձ փափուկ դրախտի մեջ Ընդունի՞ր քո մեղավոր ծառայի աղոթքները՝ բարեխոսությամբ սրբերի, որոնք հաճո եղան Քեզ, Տե՛ր մեր Հիսուս Քրիստոս: Եվ Քեզ Հոր և Սուրբ Հոգուդ հետ փա՛ռք հավիտյան հավիտնենից, ամեն:

### Ծաշից առաջ

Օրինի՞ր, Քրիստո՞ս Աստուած մեր, հոգևոր օրինությամբ քո ծառաների կերակորսները և ըմպելիքները և շնորհի՞ր հոգու և մարմնի առողջություն, որպեսզի, կրոնավորական պարկեցությամբ օգտվելով այս մարմնավոր պետքերից, քո բոլոր սուրբերի հետ հաղորդ լինենք առանց բարիքներիդ և երկնքի արքայությանը Եվ գոհությամբ փառավորենք Քեզ Հոր և Ամենասուրբ Հոգուդ հետ այժմ և միշտ և հավիտյան հավիտնենից, ամեն-

Խաղաղությամբ ճաշակենք այս կերակորսները, որոնք մեզ համար պատրաստված են

Տիրոց կողմից, օրհնյալ է Տերն իր պարզեցներում, ամեն:

### Գոհություն ճաշից հետո

Փա՛ռք Քեզ, Տե՛ր, փա՛ռք Քեզ, փառա՛ց Թագավոր, որ տվեցիր մեզ ուրախության կերակուր և Քո ամենաբավ ողորմության լիությամբ լցրեցիր մեր սրտերը: Այժմ լցրո՞ւ մեզ նաև Քո Սուրբ Հոգով, որպեսզի ընդունելի լինենք Քո առաջ և ոչ ամոթահար, քանզի Դու գալիս ես և հաստուցում յուրաքանչյուրին ըստ իր գործերի Ես Քեզ վայել է փա՛ռք, իշխանություն և պատի՛վ այժմ և միշտ և հավիտյանս հավիտենից, ամեն:

### Աղօքք ընդդեմ դևերի և կախարդների կապանքների և ընդդեմ աղանդավորների

Թագավո՞ր հզօր, ապավե՛ն ծարավյալների, Փրկի՛չ Շեղյալների, որ մեզ համար խոնարհվեցիր հայրական ծոցից և մարմին առար սուրբ Կոյս Մարիամից, մեր փրկության համար մատնվեցիր, բռնվեցիր, շարչարվեցիր, խաչվեցիր, թաղվեցիր, հարություն առար մեռեներից և փառուվ համբարձվեցիր առ Հայր, արթնացրո՞ւ

Քո գորությունը և արի՝ ապրեցնելու, Տե՛ր, Քո Արեամբ գնվածներին, թույլ մի՛ տուր սատանային գերել Քո փրկածներին և շարին՝ բնակուելու Քո սուրբ անվան տաճարում և Քեզ լրած մարմինն ու անդամը մի՛ թող շարի ուսնահարությանն ու ծաղրին, այլ գռա՛ արարածներիդ Քո արարչական սիրով Տե՛ր, ողորմի՛ր մեզ, քանզի մշտապէս պարծեցանք Քո Խաչով, և պահելով թող պահի մեզ երևելի և աներևոյթ թշնամուց և պահապան լինի Աստուծոյ ծառայիս. ամեն:

### Գիշերային ժամի

Բարերա՛ր Տե՛ր, նայի՛ր ողորմությամբ Քեզ երկրպագողիս և Քո սուրբ Անունը փառարանողիս Զորությունների՛ Տե՛ր, հանդարտեցրո՞ւ մեզ սատանայական բոլոր խոռվություններից և աշխարհիկ հոգսերից: Առաքի՛ր Քո խաղաղության նրեշտակին, որ մեզ անխոռվ պահի գիշեր և ցերեկ, քնած և արյառու ժամանակ: Որպեսզի բարեպաշտությամբ և արժանավորապէս Քեզ՝ Տիրոջդ ծառայելով այս կյանքում, ժամանենք երկնքի հավիտենական արքայությունը, որ աշխարհի ստեղծման սկզբից պատրաստեցիր Քո սրբերի համար: Եվ նրանց նետ գոհանալով՝ փառավո-

րենք Հորը և Որդուն և Սուրբ Հոգուդ այժմ և  
միշտ և հավիտյանս հավիտենից. ամեն

Տե՛ր ցերեկվա և գոյացուցիչ գիշերի. Եռու,  
որ արարեցիր ցերեկը բարեգործության և մեր  
անձանց փրկության. իսկ գիշերը՝ մեր հոգնած  
բնության հանգստի համար և այժմ արթնացնե-  
լով բացեցիր մեր բերանները՝ Քո մեծ և փա-  
ռավորյալ սուրբ անվան օրինաբանության հա-  
մար. ընդունի՛ր այժմ մեր աղաշանքները և օգ-  
նի՛ր մեզ ուղիղ հավատով և առաքինասեր վար-  
քով պաշտել Քեզ միշտ և պաշտամունքի նույն  
կարգով անդադար փառավորել Հորը և Որդուն  
և Սուրբ Հոգուդ այժմ և միշտ և հավիտյանս  
հավիտենից. ամեն:



# **Ա. ՆԵՐՍԵՍ ԾՆՈՐՀԱԼՈՒ ԱՂՈԹՔԸ ՔՐԻՍՏՈՍԻՆ ՀԱՎԱՏԱՑՈՂ ՅՈՒՐԱԳԱՆՉՅՈՒՐ ԱՆՁԻ ՀԱՄԱՐ**

**Ա**

Հավատով խոստովանում և երկրպագում  
եմ Քեզ, Հայր և Որդի՝ և Սուրբ Հոգի,  
անեղ և անմա՞ն բնություն, հրեշտակների  
եւ մարդկանց և բոլոր արարածների՝  
Արարիչ, ողորմի՛ր Քո արարածներին և  
ինձ՝ բազմամեղիս

**Բ**

Հավատով խոստովանում և երկրպագում  
եմ Քեզ, անքաժանելի լուս, միասնական  
Սուրբ Երրորդություն և մի Աստվածություն,  
արարի՛չ լուսի և հալածի՛չ խավարի,  
հալածի՛ր իմ մոգուց մեղքերի և անգիտու-  
թյան խավարը և լուսավորիր միտքն իմ այս  
ժամին՝ աղոթելու Քեզ հաճո և ընդունելու  
Քեզանից իմ խնդրանքները. և ողորմի՛ր Քո  
արարածներին և ինձ՝ բազմամեղիս

Գ

Հայր Երկնավոր, Աստված ճշմարիտ, որ  
առաքեցիր Քո սիրելի Որդուն մոլորյալ  
ոչխարիս փնտրելու համար, մեղա Երկնքի  
և Քո առաջ, ընդունի՛ր ինձ, ինչպես անս  
ուակ որդուն և հագցրո՛ւ ինձ առաջին պատ  
մուճանը որից մերկացա մեղքի պատճա-  
ռով, և ողորմի՛ր Քո արարածներին եվ ինձ  
բազմամեղիս:

Դ

Որդի՛ Աստուծո, Աստված ճշմարիտ, Որ  
խոնարհվեցիր հայրական ծոցից և մարմին  
առար սուրբ Կույս Մարիամից՝ մեր փրկու-  
թյան համար, խաչվեցիր, թաղվեցիր և  
հարություն առար մեղալներից և փառքով  
համբարձվեցիր Հոր մոտ, մեղա Երկնքի և  
Քո առաջ, հիշի՛ր ինձ, ինչպես ավագակին,  
երբ գաս Քո Արքայությամբ, և ողորմի՛ր  
Քո արարածներին և ինձ՝ բազմամեղիս.

Ե

Հոգի՛ Աստուծո, Աստված ճշմարիտ, որ  
իշար Հորդանան և վերնատուն, և լուսա-  
վորեցիր ինձ սուրբ Ավագանի մկրտու-

թյամբ, մեղա երկնքի և Քո առաջ, մաքրի՛ր  
ինձ վերստին, Քո աստվածային հրով,  
ինչպես հրեղեն լեզուներով՝ սուրբ առաք-  
յալներին, և ողորմի՛ր Քո արարածներին  
ինձ՝ բազմամեղիս

## Զ

Անստեղծ քնություն, Մեղա Քեզ՝ իմ  
մտքով, հոգով և մարմնով, մի՛ հիշիր  
մեղքերն իմ նախկին Քո սուրբ անվան հա-  
մար, և ողորմի՛ր Քո արարածներին և ինձ՝  
բազմամեղիս:

## Ե

Ամեն ինչ տեսնո՞ղ, մեղա Քեզ խորհրդով,  
խոսքով և գործով, ջնջի՛ր ձեռագիրն իմ  
Բանցանքների և գրի՛ր իմ անունն Կյանքի  
Գրքում, և ողորմի՛ր Քո արարածներին և  
ինձ՝ բազմամեղիս.

## Ը

Գաղտնիքնե՛ր Քննող, մեղա՛ Քեզ կամա և  
ակամա, գիտակցաքար և անգիտակցա-  
քար, թողություն շնորհի՛ր մեղավորիս.  
քանզի սուրբ Ավագանի ծնունդից մինչև

այսօր մեղանչել եմ Քո Աստվածության  
առաջ, իմ զգայարաններով և մարմնիս  
բոլոր անդամներով. և ողորմի՛ր Քո  
արարածներին և ինձ՝ բազմամեղիս

Ժ

Ամենախնամ Տեր, Քո սուրբ երկյուղը իմ  
աշքերին պահապան դիր, այլևս անպատ-  
կառ չնայելու, և ականջներիս՝ չախորժելու  
լսել չարության խոսքեր, և բերանիս՝ սուս  
չխոսելու, և սրտիս՝ չար չխորհելու, և ձեռ-  
քերիս՝ անիրավություն չգործելու, և ոտ-  
քերիս՝ անօրեն ճանապարհներով չգնալու,  
այլ ուղղի՛ր սրանց շարժումը՝ միշտ յինելու  
ըստ քո պատվիրաններին. և ողորմի՛ր Քո  
արարածներին և ինձ՝ բազմամեղիս:

Ժ

Հո՛ր կենդանի՝ Քրիստոս, Քո սիրո Բուրը  
որ գցեցիր երկրում բորբոքիր իմ անձում,  
որպեսզի այրի իմ Բոգու ախտերը. և սրբի  
իմ խղճը. և մաքրիր մեղքերն իմ մարմնի, և  
վառի Քո գիտության լուսն իմ սրտում. և  
ողորմի՛ր Քո արարածներին և ինձ՝  
բազմամեղիս.

## ԺԱ.

Խմաստության հայ՞ր Հիսուս, Տո՛ւր ինձ  
խմաստություն ամեն ժամ Քո առջև բարին  
խորհնելու, խոսելու և գործելու և փրկի՞ր ինձ  
շար խորհուրդներից, խոսքերից և գործե-  
րից, և ողորմի՞ր Քո արարածներին և ինձ՝  
բազմամեղիս

## ԺԲ.

Բարիք կամեցող Տեր կամարար, մի՛ թող  
ինձ իմ անձի կամքով գնալ, այլ առաջնոր-  
դի՞ր ինձ՝ միշտ լինել ըստ Քո բարեսեր  
կամքի, և ողորմի՞ր Քո արարածներին և  
ինձ՝ բազմամեղիս

## ԺԳ.

Արքա Երկնավոր, տո՛ւր ինձ քո արքայու-  
թյունը, որ խոստացար քո սիրելի իներին, և  
գորացրո՛ւ իմ սիրտը՝ ատելու մեղքը և  
միայն սիրեմ քեզ և քո կամքդ կատարեմ. և  
ողորմի՞ր Քո արարածներին և ինձ՝  
բազմամեղիս

## ԺԴ

Խնամո՞ղ արարածների, խաչիդ նշանով  
պահպանի՞ր Բոգիս և մարմինս մեղքերի  
պատրաճներից, դեերի փորձություն-  
ներից, անիրազ մարդկանցից և Բոգու և  
մարմնի բոլոր վտանգներից, և ողորմի՞ր  
Քո արարածներին և ինձ՝ բազմամեղիս

## ԺԵ

Բոլորի պահպան Քրիստոս. Թող Քո  
աջը Բովանի լինի ինձ Վրա. Գիշեր և ցերեկ,  
տաճը Ծառելիս, ճանապարհ գնալիս,  
Անջելիս և արթնանալիս, որպեսզի երեք  
չսասանվեմ. և ողորմի՞ր Քո արարածնե-  
րին և ինձ՝ բազմամեղիս:

## ԺԶ

Աստված իմ, որ բացում ես ձեռքերդ և  
լցնում բոլոր արարածներիդ. Քո ողորմու-  
թյամբ, Քեզ եմ Բանձնում իմ անձը, Դո՛ւ  
Բոգա և պատրաստիր իմ Բոգու և մարմնի  
Կարիքները այսուհետև մինչև յավիտյան. և  
ողորմի՞ր Քո արարածներին և ինձ՝  
բազմամեղիս:

## **ԺԵ**

Մոլորյաղներին դարձի՛ բերող, ե՛տ  
դարձրու ինձ իմ շար սովորություններից  
քարի սովորության և քենոխի՛ր իմ հոգում  
մահվան սոսկալի օրը և գերենի երկյուղը և  
արքայության սերը, որպեսզի զղչամ մեղ-  
քերս և գործեմ արդարություն. և ողորմի՛ր  
Քո արարածներին և ինձ՝ բազմամեղիս:

## **ԺԸ**

Անմահությա՛ն աղբյուր, բխեցրո՛ւ իմ  
սրտից զղչման արցունքներն, ինչպես  
պոռնիկին, որպեսզի լվամ իմ հոգու  
մեղքերն աշխարհից ելնելուց առաջ. և  
ողորմի՛ր Քո արարածներին և ինձ  
բազմամեղիս

## **ԺԹ**

Պարզեի՛չ ողորմության, պարզեի՛ր ինձ  
ուղղափառ հակատքով և քարի գործով և  
Քո սուրբ Մարմնի և Արյան աղորդությամբ  
գալ Քեզ մոտ. և ողորմի՛ր Քո արարած-  
ներին և ինձ՝ բազմամեղիս.

## Ի

Բարերար Տեր, ինձ բարի Բրեշտակի՝  
Բանձնիր՝ Բոգիս քաղցրությամբ ավան-  
դելու Բամար, և անխռով անցկացնելու  
դևերի շարություններից, որոնք երկնքի  
ներքո են գտնվում. և ողորմի՛ր Քո  
արարածներին և ինձ՝ բազմամեղիս:

## ԻԱ

Լուս ճշմարիտ Թրիստոս, արժանավորիր  
իմ Բոգիին այն կանչի օրը ուրախությամբ  
տեսմել Քո փառքի լուսը և բարիքների  
Բույսով Բանգչել արդարների օթևանի մեջ,  
մինչև Քո գալստյան մեծ օրը. և ողորմի՛ր  
Քո արարածներին և ինձ՝ բազմամեղիս

## ԻԲ

Արդար դատավոր, երբ Հոր փառքով գաս  
դատելու ողջերին և մեռածներին. մի՛ մտիր  
դատաստանի մեջ Քո ծառայի Բետ, այլ  
փրկի՛ր ինձ Բավիտենական Բրից և լսելի  
արա ինձ արդարների երանավետ կանչը  
Դեպի երկնքի արքայությունդ. և ողորմի՛ր  
Քո արարածներին և ինձ՝ բազմամեղիս

Ի՞.

Ամենառորմ Ցեր, ողորմիր բոլոր քեզ  
Բավատացող Ենթին, յուրային ներիս և  
օտարներին, ծանոթներին և անծանոթնե-  
րին, ողջերին և մեռածներին, թողություն  
շնորհիր նաև իմ թշնամիներին և ատող-  
Ենթին իմ դեմ գործած Բանցանքների Բա-  
մար և ետ դարձրու նրանց չարություննե-  
րից, որ ունեն իմ դեմ, որ արժանանան Քո  
ողորմության. և ողորմի՛ր Քո արարածնե-  
րին և ինձ՝ բազմամեղիս:

Ի՞.

Փառավորված Ցեր, ընդունիր Քո  
ծառայիդ աղաշանքները և ի բարի՛  
Կատարիր իմ խնդրանքները՝  
բարեխոսությամբ սրբութի Աստվածածնի  
և Հովհաննես Մկրտչի և Սուրբ  
Ստեփանոս Նախավկայի և մեր սուրբ  
Գրիգոր Լուսավորչի և սուրբ առա-  
քյալների, մարգարեների, Վարդապետ-  
ների և մարտիրոսների, Բայրապետների,  
ճգնավորների, կույսների և քո բոլոր  
երկնային և երկրային սուրբների.և քեզ  
փա՛ռ և երկրպագություն անքաժանելի

Սուրբ Երրորդությանդ, Բավիտյանս  
Բավիտենից, ամեն:

## ԳՐԻԳՈՐ ՆԱՐԵԿԱՅԻ Մատյան Ողբերգության

### ԲԱԽ ԽԱ

Որդի՝ Կենդանի Աստուծո, ամենաօրի-  
նյա՛լ, Դու անքնին ծնունդ ահավոր հոր,  
Քեզ Բամար չկա ոչինչ անհնար ու անկա-  
րելի: Երբ ողորմությանդ փառի անստվեր  
ճաճանշները ծագեն, կրալվեն մեղքերը,  
կրալածվեն դեւերն ու կջնջվեն Բանցանք-  
ները, կխզվեն կապանքները, կխորտակ-  
վեն շղթաները, կկենդանանան մեռյալ-  
ները, կբուժվեն զարկվածները, և վերքերը  
կառողջանան. կվերանան ապականու-  
թյունները, տեղի կտան տխրություննե-  
րը, կնահանջեն հեծությունները, կփախչի  
խավարն, ու մեզը կմեկնի, կցրվի մառա-  
խուղն, ու մոայլը կփարատվի. կսպառվի  
աղջամուղը, կվերանա մութն, ու գիշերը  
կանցնի, տագնապը կտարագրվի, կշա-  
նան չարիքները, Բուսահատությունները

Կրալածվեն, և կթագավորի քո ձեռքն  
ամենակարող, քավի՛շդ բոլորի:

\* \* \*

Դու չեկար կորցնելու մարդկանց հոգի-  
ներն, այլ ազատելու. Եերի՛ր ինձ անթիվ  
շարիքներս՝ քո բազում ողորմությամբ, զի  
դու միայն եւ երկնրում անճառ եւ երկրում  
անզնին, գոյության տարրերի մեջ եւ աշ-  
խարհի բոլոր ծագերում, սկիզբն ամեն  
ինչի, եւ ամեն ինչի մեջ՝ ամբողջ լրու-  
մով, օրինյա՛լ ի բարձունս. և Քեզ՝ Հոր ու  
սուրբ Հոգուդ Բետ՝ փա՛ռք հավիտյանս:  
Ամեն:

## ԲԱՆ ԶԹ

Աստված եւ Տեր, կյանք եւ արարիչ,  
ողորմած, գթած, լուս երկայնամիտ,  
անխակալ, մարդասեր, ամենագութ,  
պարգեւատու, փրկիչ, օրինյա՛լ, գովյալ եւ  
բարեբանյալ Ամուր պահարան, վտա-  
նելի պատսպարան, բարություն՝ առանց  
նենգության, ճառագայթ՝ առանց խավա-  
րի, քավիչ մեղքերի, բուժիչ վերբերի, ան-  
հաս Եերի՛՛ Բառը, անմերձների՛՛ մոտիկ.

անհուսության ելք, անունդ խոստովան-  
ված՝ Աստուծո որդի Քնզ եւ աճավոր ու  
հզոր Հորդ և քեզ նետ երկրպագելի  
ամենակալ Հոգուդ փա՛ռը ու պաշտոն  
գոհաբանության հավիտյան. Ամեն

## ՍԱՂՄՈՍ 25

Պաշպանի ինձ, Տեր,  
Քանի որ անարատ ընթացա՝  
Տիրոջն եմ նուացել. անասան եմ:  
Փորձիր ինձ, Տեր, և քննիր ինձ,  
Քննիր իմ սիրտն ու միտքը.  
Ողորմությունդ աշքերիս առջև ե.  
Ես ել ճշմարտությանդ մեջ եմ ընթանում  
Ունայն մարդկանց նետ չեմ նատում,  
Կեղծավորների նետ չեմ գնում  
Անում եմ նավարը չարերի.  
Եվ մերժում չեմ նատում ամբարիշտների  
նետ:  
Անմեղությաբ ձեռքերս եմ լվանում,  
Զոհասեղանիդ շուրջը դատում, Տեր,  
Գովքն եմ Գո բարձրաձայն նոշակում,  
Բոլոր սրանչի գործերդ պատմում:

Տեր, սիրում եմ այն տունը, ուր դու ես  
ապրում

Եվ Քո փառքի բնակած տեղը:  
Մեղավորների հետ մի կործանիր ինձ,  
Եվ իմ կյանքը՝ արյունաբերությանց  
հետ.

Նրանց ձեռքերին անօրենություն կա,  
Իսկ նրանց աջը լի է կաշառքով:  
Անարատ եմ ընթամում ես.

Փրկագնիր և ողորմիր:  
Ուրս ուղիղ գետնին եմ դրել,  
Մեծ հավաքույթում Տիրոջը կօրհնեմ:  
Փառք Հոր և Որդվուն Հոգվովն սրբոյ,  
այժմ և միշտ և Բավիտյան Բավիտենից:  
Ակմեն:

## ՍԱՂՄՈՍ 26

Տերն է իմ Լուսն ու Փրկությունը, ես ումի՞ց  
եմ վախենում Տերն է իմ կյանքի  
ապավենը, ես ումի՞ց եմ դողում  
Չարերը երբ Բարձակվեն վրաս Մարմինս  
լափելու Բամար, նեղիչ ներս ու

թշնամիներս, երբ գրոհնեն վրաս.

սահմելու են ու վայր ընկենն

Երեւ մի բանակ էլ ինձ պաշարի, սիրտն իմ  
չի վախենա Եթե մարտնչեն էլ իմ  
դեմ, դարձյալ վստահ պիտի լինեմ

Մի բան եմ խնդրում Տիրոջից՝ այս եմ  
միայն աղաչում, որ որ Տիրոջ տանը  
բնակվեմ Կյանքիս բոլոր օրերում.  
Տիրոջ վայելչությունը տեսնեմ ու իր  
տաճարում նրեն աղերսեմ:

Գևանի որ չար օրերում իր Սրահում  
ապահով պահում է, իր խորանում է  
ինձ ծածկած պահում, բարձր ժայռի  
վրա ամուր հաստատում:

Ինձ շրջապատող թշնամիներիս վրա  
գլուխս բարձր եմ պահում, իր  
խորանում գոհության պատարաց  
պիտի մատուցեմ: Կերգեմ ու  
կսաղմոսեմ Տիրոջը.

Լսիր ձայնս, երբ կանչեմ, ով Տեր, ողորմիր  
ինձ եւ պատասխանիր:

Ասում ես՝ երեսս խնդրեք Սիրտս ասում է  
Քեզ՝ Երեսդ, ով Տեր, խնդրում եմ,  
փնտրում եմ

Երեսդ ինձնից մի ծածկիր, Բարկությամբդ  
ծառայիդ մի մերժիր Դու Օգնականն  
ես իմ, Տեր, Ինձ մի անարգիր, Եվ մի  
թող ինձ, Աստված՝ Փրկիչ իմ:

Եթե հայրս ու մայրս ել թողեն ինձ, Ապա  
Տերն ինձ կը նորոնի

Տեր, սովորեցրու ինձ ճանապարհը Քո, Եվ  
Քո ուղիղ շավիղ ներում ինձ  
առաջնորդի կեղեքիչ ներս  
պատճառով

Նեղիչ ներիս ձեռքը մի մատնիր ինձ. Կեղծ  
վկաներն են ելել իմ դեմ, անգուք  
ստեր են փշում

Հավատում եմ՝ տեսմելու եմ Տիրոց  
Բարությունը կենդանի եղողների  
երկրում. Տիրոջը սպասիր,  
քաջալերվիր ու սրտապնդվիր եւ  
Տիրոջը սպասիր

Փառք Հոր և Որդվոն Հոգվույն սրբոյ,  
այժմ և միշտ և հավիտյանս հավիտենից.  
Ամեն:

## ՍԱՂՄՈՍ 130

Այրուն շգթողացավ, ով Տեր, աշքերս էլ  
յրարձրացրի. Ես մեծամեծ բաների եւ  
ինձ Բամար սրանչելի բաների հետ  
առնչություն չունեցա

Այ իմ անձը Բանդարտեցրի ու  
Բանգստացրի մոր կաթից կտրած  
մանկան պես եմ: Կաթից կտրած  
մանկան պես իմ ներսը.

Խարապելը թող Տիրոջը Բուսա  
Ակսութեան մինչև Բավիտյան:

Փառք Հոր և Որդվո և Հոգվույն սրբոյ,  
այժմ և միշտ և Բավիտյան Բավիտենից  
Ամեն.

### Ողջոյն Սուրբ ծննդյան

- Քրիստոս ծնավ և յայտնեցաւ:
- Օրինեալ է յայտնութիւնը Քրիստոսի

### Ողջոյն Սուրբ զատկի

- Քրիստոս յարեաւ ի մեռելոց:
- Օրինեալ է յարութիւնն Քրիստոսի:

## Ողջոյն Սուրբ Պատարագի

Ողջոյն տուր միմեանց...

- Քրիստոս ի մեջ մեր յայտնեցաւ :

- Օրինեալ է յայտնութիւնն Քրիստոսի

## Մասք բաշխելու պահին

Մաս բաշխողն ասում է.

- Մասն և բաժին եղիցի Սուրբ Պատարագիս

Մաս ստացողն ասում է.

- Բաժին իմ Աստված յավիտեան.

## Հաղորդություն ստանալու ժամանակ

Հավատացյալն ասում է.

- Մեղայ Աստուծոյ

Քահանան պատասխանում է.

- Սա եղիցի քեզ քառութիւն և քողովային  
մեղաց քոց:

## Մկրտության ժամանակ

Քահանան հարցնում է կնքահորը.

- Երախայս զի՞նչ խնդրէ

Կնքահայրը պատասխանում է.

Հոգածություն, սեր և մկրտութիւն  
ՄՌԱՐԻ և արդարանալ, սրբի ի մեղաց,  
առաջապեսի ի ոլուաց և ծառացել Խատուծոյ

### Հոգեորականներին բարեելու ձեզ

Կաթողիկոսին «Աստված օգնական, ՎԵ-  
հաւիսու տէր»

Եպիսկոպոսին «Աստված օգնական Ար-  
քայուն Շայը»

«Հարդապետին» «Աստված օգնական,  
Հոյցը սու բը»

«Քահանային» «Օրհնեցե՛ք, Տեր Բայր».

### Ինչպես խաչակնքել

Ամեն աղոթքից առաջ և Բետո խաչա-  
կնքի ը Բետեալ ձեռվ.

Աղոթքից առաջ միացրո՞ւ աջ ձեռքիդ ա-  
ռաջին երեք մատները (բթամատ, ցուցամատ և  
միջնամատ), Բայի՛ր ճակատիդ՝ ասելով՝ Բանուն  
Հոր, իջեցրո՞ւ կրծքիդ՝ ասելով՝ և Որդու, տա՛ր  
կրծքիդ ձախ կողմը՝ ասելով՝ և Հոգուն, ապա  
տար կրծքիդ աջ կողմը՝ ասելով Սուրբ Ալմու-  
թետն ձեռքիդ ափը դի՛ր կրծքիդ վրա ու ասա  
ամեն

Աղոթքի վերջում ասա՝ «Փա՛ռը Հորը և  
Որդուն և Սուրբ Հոգուն այժմ և միշտ և հավի-  
տյանս հավիտենից. ամեն».



